ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (1965 -1991 թթ.)

ՆԱԶԱՐՅԱՆ Մ. Տ.

Հայ ժողովրդի բազմադարյա պատմությունը գոյամարտի դժվարին պատմություն է՝ հյուսված հերոսականի ու ողբերգականի տարրերով, գրված ստեղծագործ աշխատանքի համար նրա թափած քրտինքի ու գոյության մշտատև կռվում նրա հեղեղած արյան շաղախով: Եվ այդ պատմության նորագույն էջը գրվեց 90 տարի առաջ՝ XX դարի սկզբին՝ Առաջին համաշխարհայինի աշխարհավեր թոհուբոհի մեջ:

878 թ. Սան-Ստեֆանոյի պայմանագրով և Բեռլինի կոնգրեսով Հայկական հարցը միջազգայնացվեց, սակայն Բեռլինի պայմանագիրը չիրականացրեց հայ ժողովրդի հույսերը: Արմատապես փոխվեցին հայ-թուրքական հարաբերությունների և՛ որակը, և՛ բնույթը: Եթե մինչ այդ հայ-թուրքական հարաբերությունները նվաճված և նվաճող ժողովուրդների դասական հարաբերությունների ձև ունեին, և մեր փոխհարաբերությունները կառուցվում էին այդ տրամաբանությամբ, ապա հայրենիքում ապրող բնիկ ժողովուրդների ծրագրավորված բնաջնջումից հետո այդ հարաբերությունների ոլորտը փոխվեց մի քանի ուղղություններով:

1915 թվականի համազգային մեծ ողբերգությունից հետո, երբ հայերի պատմական հայրենիքը՝ Արևմտյան Հայաստանը, երիտթուրքական իշխանությունների իրականացրած ցեղասպանության հետևանքով լիովին հայաթափվեց, ինքնին հասկանալի է, որ Հայկական հարցը՝ որպես Օսմանյան կայսրության հայկական նահանգներում հայանպաստ բարեփոխումների իրականացման խնդիր, պետք է կորցներ իր նախկին բովանդակությունը:

Սակայն 1920 թ. օգոստոսի 10-ին կնքված Սևրի պայմանագիրը, որով Թուրքիան ճանաչում էր Հայաստանի լիիրավ անկախությունը, Հայաստանի առաջին հանրապետությանը վերադարձվում հայոց պատմական հայրենիքի մի զգալի մասը, ամրագրվեցին պատերազմի հանցագործներին պատժելու և հասցված վնասի փոխհատուցման դրույթները[1], Թուրքիայի Հանրապետությանը զգացնել տվեց համաշխարհային հանրության ճնշումը՝ Առաջին աշխարհամարտի ընթացքում հայ ժողովրդի դեմ գործած հանցագործության համար պատասխանատվության կանչվելու առումով: Հայոց հայրենիքի պահանջատիրությունը իրենց վրա վերցրին ցեղասպանությունից փրկված և աշխարհի բազմաթիվ երկրներում ապաստան գտած արևմտահայության բեկորները, որոնք նոր պայմաններում

---

[1] *Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Ե., 1972, էջ 676-680.*

ձևավորվում էին որպես սփյուռքահայություն: Աշխարհասփյուռ հայության համար այն դարձավ հայկական հողերի՝ հայրենիքի վերադարձման պայքարի հարց, որը Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո արտահայտվեց ցեղասպանության միջազգային ճանաչմանն ու հատուցմանն ուղղված շարժման ձևով՝ ստանալով «Հայ դատ» պայմանական անվանումը:

Չնայած ձեռք բերված որոշ հաջողություններին, այնուամենայնիվ, արմատական շրջադարձ Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության ճանաչման համար մղվող պայքարում չկատարվեց:

Միջազգային դիվանագիտությունը Հայկական հարցն ու Մեծ եղեռնը 30-ական թվականներին մատնեց անուշադրության, իսկ թուրքական պատմագրությունն այս հարցերին սկսեց անդրադառնալ հայ ժողովրդի ողջ պատմական անցյալը կեղծելու մեկնարկումով: Վերստին նշենք, որ թուրքական նման գործելաոճի հիմնական շարժառիթներից մեկը Հայոց ցեղասպանության համար միջազգային իրավական պատասխանատվությունից խուսափելն է: Օսմանյան կայսրությունը Թուրքիային փոխանցեց Հայոց ցեղասպանության ծանր ժառանգությունը, որը կոծկելու նպատակով արդեն հանրապետական Թուրքիան չի խնայում ո՛չ ջանք ու ո՛չ էլ ֆինանսական ռեսուրսներ[2]:

Ստեղծված իրավիճակում հայ ազատագրական միտքը, ելնելով Բեռլինի կոնգրեսի պատմական դասերից, հանգեց «երկաթե շերեփի» գաղափարին, այն է՝ Հայկական հարցը զինված ուժով լուծելու գաղափարին, ինչն էլ մեծապես նպաստեց անկախ պետության վերականգմանը: Անկախության հռչակումից հետո ավելի մեծ հեռանկարներ բացվեցին Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման համար, քանի որ այդ պահանջով արդեն հանդես էր գալիս ոչ թե ինչ-որ մի կազմակերպություն, այլ անկախ պետություն: Թվում էր, թե ճակատագիրը սկսում էր բարեհաճ դառնալ հայ ժողովրդի նկատմամբ: Բայց ոչ: Պայքարի քաղաքակիրթ մեթոդները ոչ մի արդյունք չէին տալիս: Աշխարհն այս ամենին նայում էր անտարբերության ապակե աչքերով: Հայ ժողովրդի հույսերը, արդար պահանջները ոչ միայն չեն իրականանում, մեծ տերությունները ոչ միայն կյանքի չեն կոչում Սևրի պայմանագիրը, այլև Լոզանի պայմանագրով փորձում են երկրորդ անգամ թաղել Օսմանյան կայսրության հայ նահատակներին:

---

[2] *Թուրքական ժխտման մասին մասնավորապես տե՛ս,* ***Dadrian V****. The Key Elements in the Turkish Denail of the Armenian Genocide: A Case Study of Distortion and Falsification, The Zoryan Institute Ontario, 1999,* **Դադրյան Վ.,** *Հայոց ցեղասպանությունը ազգային և միջազգային իրավունքի երկակի հիմնախնդիր, Ե., էջ 30-43,* **Սարգսյան Ե., Սահակյան Ռ.,** *Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենգափոխումը թուրք պատմագրության մեջ, Երևան, 1963,* **Ներսիսյան Մ.,** *Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր, Ե., 2005,* **Մարուքյան Ա.,** *Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմաիրավական հիմնավորումները, Ե., 2014:*

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման տեսակետից մինչև 1970-ական թվականները կարելի է բնորոշել որպես լռության և անտարբերության շրջան, իսկ 1923-1973 թթ. աշխարհը խոսում էր միայն «հայ գաղթականության մասին»:

Հայոց ցեղասպանությանը հաջորդած ցեղասպանությունները՝ Հրեական հոլոքոստը, Կամբոջայում, Ռուանդայում, Բուրունդիում, Բալկաններում՝ Հարավսլավիայում, Սուդանում, Եթովպիայում, Նիգերիայում, Պաղեստինի արաբ ժողովրդի ողբերգությունը և այլ երկրներում իրագործված ցեղասպանություններն ու էթնիկական զտումներն իրենց ազդեցությունն ունեցան Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման շղթայում: Ըստ էության, Հայոց ցեղասպանությունը, լինելով XX դարի առաջին ցեղասպանությունը, դուրս եկավ մոռացության վիճակից, Օսմանյան կայսրության շրջանակներից և մեկ ժողովրդի երևույթը լինելու իրողությունից վերածվեց միջազգային երևույթի, որի հիմքի վրա ձևավորվեց ցեղասպանագիտությունը:

Այսպիսով, հայ ժողովրդի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում պատմության չավարտված գլուխն է: Քանզի յուրաքանչյուր հայի համար, աշխարհի որ ծայրում էլ նա ապրի, XX դարասկզբի այս ծանրագույն ոճրագործությունը մնում է որպես անբեկանելի ցավ, որը արյան միջոցով սերնդեսերունդ անցնելով՝ չի հանդարտվի այնքան ժամանակ, քանի դեռ ոճրագործն ըստ արժանվույն չի դատապարտվել, իսկ հայերը փոխհատուցում չեն ստացել: Եթե հրեաների դեպքում նյութական փոխհատուցման խնդիրն էր, որն այսօր էլ կատարում է Գերմանիան, ապա հայերի համար նաև բռնազավթված և հայաթափված հայրենիքի վերադարձի խնդիրն է:

Այսպիսով, բովանդակ հայության համար կարևորագույն և առաջնահերթ խնդիր է եղել և մնում է ցեղասպանության միջազգային ճանաչումը: Քանզի ցեղասպանության ճանաչումն ինքնին ցեղասպանության դեմ պայքարի մի հիմնավոր միջոց է, որը մարդու ապահով գոյատևման իրավունքի հաստատումն է:

Միջազգային առաջին արձագանքը այս իրադարձություններին 1915թ. մայիսի 24-ի Ֆրանսիայի, Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի համատեղ հայտարարությունն էր, որտեղ առաջին անգամ միջազգային ասպարեզում երեք խոշոր տերությունները հայ ժողովրդի նկատմամբ կատարված բռնությունները բնորոշեցին որպես «հանցագործություն մարդկության և քաղաքակրթության դեմ»[3]: Կողմերը կատարվածի համար պատասխանատու էին համարում թուրքական կառավարությանը:

---

[3] *Հայոց ցեղասպանություն. Աշխարհի պետությունները, ազգային խորհրդարանները և միջազգային կազմակերպությունները դատապարտում են և ճանաչում (նյութերի ժողովածու), կազմող, պատասխանատու խմբագիր և առաջաբանի հեղինակ՝* **Բաբսեղյան Լ.,** *Ե., 2005, էջ 4:*

Նշենք, որ ցեղասպանության պատժելիությունը սահմանվել է նախ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի՝ 1946 թ. դեկտեմբերի 11-ի թիվ 96 բանաձևով, իսկ արդեն 1948 թ. դեկտեմբերի 9-ին «Ցեղասպանության հանցագործությունները կանխելու և դրա պատժի մասին» կոնվենցիայով, իսկ միջազգային մի շարք այլ փաստաթղթերով սահմանված են, որ այդօրինակ հանցագործությունները վաղեմության ժամկետ չունեն, և ցեղասպանություն իրագործած յուրաքանչյուր պետություն հատուկ իրավական պատասխանատվություն է կրում, անկախ այն բանից, թե կգտնվեն և պատժի կենթարկվե՞ն ոճրագործությունների անմիջական կազմակերպիչները, թե՞ ոչ[4]: Այդ կոնվենցիայի առաջին հոդվածում նշվում էր, որ գենոցիդը, անկախ նրանից՝ իրագործվել է պատերազմի ժամանակ, թե խաղաղության, հանցագործություն է, որը խախտում է միջազգային իրավունքի նորմերը:

Կոնվենցիայի երկրորդ հոդվածն ամբողջությամբ վերաբերվում է ցեղասպանական գործողությունների նկարագրությանը:

Երրորդ հոդվածում նշվում էր, որ սույն կոնվենցիայում ցեղասպանություն հասկացությունը ենթադրում է այն գործողությունները, որոնք կատարվում են որևէ ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական խմբի՝ որպես այդպիսին ամբողջովին կամ մասամբ ոչնչացնելու մտադրությամբ.

1. *այդպիսի խմբի անդամների սպանություն*
2. *որևէ խմբի համար կանխամտածված ձևով կյանքի այնպիսի պայմանների ստեղծում, որի նպատակն է նրան ամբողջովին կամ մասնակիորեն ոչնչացնել*
3. *այդ խմբի անդամներին լուրջ մարմնական վնասվածքներ կամ մտային խանգարումներ պատճառել*
4. *կազմակերպել միջոցառումներ, որոնք նպատակ ունեն կանխարգելել այդպիսի խմբի մանկածնությունը*
5. *երեխաներին բռնությամբ մարդկային մի խմբից մյուսին փոխանցելը:*

Հարկ է նշել, որ ՄԱԿ-ի համաձայնագրի 6-րդ հոդվածը պատժելի է համարում ցեղասպանության կազմակերպումը, իսկ ցեղասպանությամբ մեղադրվածներին պատժելու իրավունքը տալիս է նույն այդ երկրի իշխանությանը կամ միջազգային դատարանին, որը վերոհիշյալ բանաձևի նկատմամբ կարող էր իրավասություն ունենալ: Միաժամանակ շատ կարևոր հիմնախնդիրներից է նաև վաղեմության ժամկետի խնդիրը: 1968թ. նոյեմբերի 26-ին ՄԱԿ-ը ընդունում է կոնվենցիա «ռազմական հանցագործությունների և մարդկության դեմ հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետի անկիրառելիության մասին»: Այս կոնվենցիայի առաջին հոդվածով մարդկության դեմ հանցագործություն է որակվում անկախ կատարման

---

[4] **Հարությունյան Ա.**, *«Ցեղասպանություն» հասկացությունը. հայասպանությունը որպես ցեղասպանության դրսևորում, Մեծ Եղեռն-90, Հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, 2005, էջ 14:*

ժամանակից «զինված հարձակման կամ օկուպացիայի հետևանքով արտաքսումը և անմարդկային գործողությունները, որոնք հանդիսանում են ապարտեիդի քաղաքականության հետևանք, ինչպես նաև ցեղասպանություն»[5]:

Հայոց ցեղասպանությունը այն եզակիներից է, որը համապատասխանում է միջազգային նորմերով ընդունված բոլոր բնորոշումներին: Ընդհանուր օրինաչափություններով լինելով ցեղասպանության դասական օրինակ՝ Հայոց ցեղասպանությունը միաժամանակ մյուսներից տարբերվում է մի շարք առանձնահատկություններով.

1. *Այն եզակի ցեղասպանություններից է, որը համապատասխանում է ՄԱԿ-ի կոնվենցիայի բոլոր հինգ բնորոշումներին, չնայած որ կոնվենցիան, ճիշտ բնութագրելով գործողությունները, չտվեց մի քանի կարևոր հարցերի պատասխան-ներ. ա) բացակայում է պատժի նկարագրությունը և ձևաչափը, բ) իբրև մարդկության դեմ գործված ոճրագործություն՝ չի պարտադրում վավերագրեր ստորագրել ՄԱԿ-ի անդամ բոլոր երկրներին, գ) հստակորեն չի պատասխանում վաղեմության ժամկետի հիմնահարցին[6]:*
2. *Ի տարբերություն հրեաների՝ Հայոց ցեղասպանությունը իրականացվեց իր հայրենիքում ապրող բնակչության նկատմամբ:*
3. *Հայոց ցեղասպանությունն իրականացվեց շուրջ 30 տարիների ընթացքում և հետապնդում էր ոչ թե մասնակի ոչնչացում, այլ ամբողջական ոչնչացում:*
4. *Այն եզակի ցեղասպանություններից է, որը չի ճանաչվել և որևէ փոխհատուցում չի տրվել:*
5. *Հայոց ցեղասպանության չճանաչումը այսօր ևս վտանգի տակ է դնում հայ ժողովրդի և ՀՀ անվտանգ կենսագործունեությունը:*

Հատկանշական է, որ անկախ պետականության բացակայության պայմաններում՝ 1921-1991 թթ., միջազգային ասպարեզում Հայ դատի հետապնդման խնդիրը մնում էր բացառապես սփյուռքահայության «մենաշնորհը»: Սփյուռքում գործող հայ ազգային կուսակցությունները, կազմակերպությունները, Հայ դատի հանձնախմբերը, եկեղեցին լայն գործունեություն ծավալեցին Հայկական հարցի քարոզչության ուղղությամբ՝ ձգտելով այն դարձնել միջազգային հարաբերությունների օրակարգի հարց: Սակայն չնայած ձեռք բերված որոշ հաջողությունների, այնուամենայնիվ, արմատական շրջադարձ Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության ճանաչման համար մղվող պայքարում չկատարվեց: Չհաջողվեց Հայկական

---

[5] **Մարուքյան Ա.**, *Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմահրավական հիմնավորումները, Ե., 2014, էջ 46-49, տե՛ս նաև* **Դաղբյան Վ.,** *Հայոց ցեղասպանությունը ազգային և միջազգային իրավունքի երկակի հիմնախնդիր, նշվ.աշխ., էջ 24-29:*

[6] **Հարությունյան Ա.**, *նշվ. աշխ., էջ 15-16:*

հարցը և Հայոց ցեղասպանությունը հանել մոռացությունից ու դարձնել միջազգային հարաբերությունների օրակարգի հարց: Սակայն 1965 թ. Հայոց ցեղասպանության 50-ամյա տարելիցի լայնածավալ նշումը սփյուռքահայ համայնքներում և հայրենիքում մեծ խթան հանդիսացավ հետագա տարիների XX դարի առաջին ցեղասպանության դատապարտման ու նրա պաշտոնական ճանաչման համար աշխարհի առաջավոր ուժերի համախմբման գործում՝:

1965 թվականը շրջադարձային եղավ Խորհրդային Միությունում և Հայաստանում Հայոց ցեղասպանության հրապարակային ճանաչման առումով: Դրան նպաստեցին այն փոփոխությունները, որոնք 1950-60-ական թթ. տեղի ունեցան Խորհրդային Միության, այդ թվում՝ Խորհրդային Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքում և գաղափարախոսական բնագավառում: Դրանք էին Ստալինի մահը, Անհատի պաշտամունքի քննադատությունը, խրուշչովյան ազատականացման՝ լիբերալիզացիայի քաղաքականությունը և այլ դրական տեղաշարժեր: Երկրում հաստատվեց նոր, համեմատաբար տանելի բարոյա-քաղաքական մթնոլորտ, մարդիկ սկսեցին առանց վախենալու բարձրաձայն արտահայտվել ազգային և քաղաքական հիմնախնդիրների մասին: Նոր բարոյաքաղաքական մթնոլորտը բարերար ազդեցություն ունեցավ առաջին հերթին Հայոց ցեղասպանության հարցի բարձրացման վրա: Լռության սառույցը կոտրվեց, այլևս չգտնվեց մի ուժ, որը ի վիճակի լիներ արգելել Հայոց ցեղասպանության հիշատակումն անգամ:

Երկրորդը ԱՍՍԱԼԱ-ի և սփյուռքահայ ընդհատակյա այլ կազմակերպությունների գործողություններն էին՝ իբրև Հայոց ցեղասպանության ճանաչման, Հայոց դատի պահանջատիրության խնդիրների լուծման կարևորությունը մշտապես հիշեցնող կարևոր գործոն: Երրորդը՝ եվրոպական մի շարք երկրներում՝ հատկապես Ֆրանսիայում, Մեծ Բրիտանիայում, Գերմանիայում և այլուր գործող մարդու իրավապաշտպան կազմակերպությունների աճող ճնշումն էր կառավարությունների վրա՝ հայերի ցեղասպանությունը ճանաչելու պահանջով:

Չորրորդ գործոնը XX դարի երկրորդ կեսին աշխարհի մի շարք երկրներում ձևավորված գիտական նոր ուղղությունն էր՝ ցեղասպանագիտությունը, որը մեծ հետաքրքրություն հանդես բերեց Հայոց ցեղասպանության խնդիրների նկատմամբ՝ հիմնավորելով նրա ճանաչման կարևորությունը:

Այս ամենը տվեցին իրենց դրական արդյունքները. միջազգային շատ հեղինակավոր կազմակերպություններ, պետական պաշտոնական շրջանակներ սկսեցին քննարկել Հայոց ցեղասպանության դատապարտման խնդիրը:

---

[7] **Բարսեղյան Լ.**, *Միջազգային հանրությունը դատապարտում է Հայոց ցեղասպանությունը, Երևան, 1998, էջ 3:*

Արդեն 1965 թ. ապրիլի 20-ին Ուրուգվայի Սենատն ու Ներկայացուցիչների պալատը համատեղ նիստում որոշեցին Ապրիլի 24-ը սահմանել Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր, իսկ 1972 թ. օգոստոսի 9-ի Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման մասին իր որոշմամբ դարձավ աշխարհի առաջին երկիրը[8]:

Երկրորդ հզոր ձայնը, որը հիշեցրեց հայերի ցեղասպանության մասին, հնչեց 1968 թվականին՝ 64 երկրների և 16 միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ հրավիրված Խաղաղասեր ուժերի համաշխարհային կոնգրեսում:

Սակայն այս հարցում կարևորագույն նշանակություն ուներ Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) վերաբերմունքը:

973 թվականին, երբ ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովի ազգային փոքրամասնությունների հանդեպ կիրառվող խտրականության և պաշտպանության ենթահանձնախմբի 26-րդ նստաշրջանում քննարկվում էր Ռուանդայի ներկայացուցիչ Նիկոդեմ Ռուխաշիանկիկոյի՝ ցեղասպանությունները կանխելու և դրա համար պատժելու հարցին նվիրված նախնական զեկուցումը, ներկայացված բանաձևի 30-րդ ենթակետը Օսմանյան կայսրության հայերի ջարդը որակեց որպես «XX դարի առաջին ցեղասպանություն»[9]: Միաժամանակ հանձնարարվեց «Փոքրամասնությունների խտրականության կանխման և պաշտպանության» ենթա-հանձնաժողովին ուսումնասիրել հայերի 1915 թ. ջարդերը՝ որպես ցեղասպանություն որակելու հարց: 12 տարի Թուրքիայի կողմից ցուցաբերվող լուրջ դիմադրությունից, բազմաթիվ խոչընդոտներից հետո՝ 1985թ. հուլիսի 2-ին, լսվեց զեկուցումը՝ ցեղասպանության կանխման և պատժելու վերաբերյալ, և 38-րդ նստաշրջանում ընդունած բանաձևի 24-րդ ենթակետում «1915-1916 թթ. հայերի օսմանյան ջարդը» որակվեց որպես ցեղասպանության օրինակ[10]:

1975 թ. ապրիլի 24-ին Կիպրոսի Ներկայացուցիչների պալատը բանաձև ընդունեց այդ օրը Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր նշելու մասին, իսկ 1982 թ. ապրիլի 29-ին նույն մարմինը հայ ժողովրդի նկատմամբ իրականացված ոճիրը բնորոշեց որպես ցեղասպանություն[11]:

1980 թվականին Կանադայի Քվեբեկ նահանգի Ազգային համագումարը և Օնտարիո նահանգի խորհուրդը որոշում կայացրին Հայոց ցեղասպանությունը ճանաչելու մասին և դիմեցին Կանադայի

---

[8] **Նահապետյան Հ.**, *Ո՞ր խորհրդարանն է առաջինը ճանաչել Հայոց ցեղասպանությունը,-www.noravank.am/arm/articles/detail.php? ELEMENT_ID =6853*

[9] **Բարսեղյան Լ.**, *Տարեգրություն Հայոց ցեղասպանության պաշտոնական դատապարտման և ճանաչման (1915-2003 թթ.), Ե., 2004, էջ 41:*

[10] **Մսըրլեան Զ.**, *ՄԱԿ-ի 30-րդ պարբերութեան ծննդոցը, Հայկազեան հայագիտական հանդէս, հ. ԺԱ, Պէյրութ, 1991, էջ 10-27:*

[11] *Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը- arminter. am/?p=940*

խորհրդարանին պաշտպանել այն, բայց առաջարկությունը պաշտպանություն չգտավ:

1984 թվականի ապրիլի 13-16-ը Փարիզում հրավիրված ժողովուրդների մշտական ատյանը իր նիստերից մեկում անդրադարձավ հայերի ցեղասպանության խնդրին[12]:

1985 թ. ապրիլի 23-ին Արգենտինայի Ազգային կոնգրեսը միաձայն որոշում ընդունեց հայերի ցեղասպանությունը դատապարտելու մասին: 1987 թ. հունիսի 18-ին Եվրախորհրդարանը հատուկ բանաձև ընդունեց հայկական հարցի քաղաքական լուծման մասին[13]:

Այդ բանաձևն ընդունելիս Եվրոպական խորհրդարանը նկատի էր ունեցել խորհրդարանական առանձին հանձնաժողովների և խմբերի ներկայացրած առաջարկությունները և հարցապնդումները:

Դեռևս 1984 թվականին խորհրդարան էր ներկայացվել սոցիալիստների խմբի առաջարկությունը հայկական հարցի քաղաքական լուծման մասին:

Այս առաջարկությանը նախորդել էր 1981 թվականին խորհրդարանի մի խումբ պատգամավորների դիմումը՝ հատուկ քննարկելու հայ ժողովրդի կացության մասին հարցը: Նույն հարցապնդումը կատարեց նաև պատգամավոր Կոլոկոտրոնիսը 1985 թվականին, որը առաջարկում էր քննարկել Հայկական հարցը և Ապրիլի 24-ը Հայոց ցեղասպանության օր հայտարարելու մասին հարցը: Եվրոպական խորհրդարանը այդ բանաձևն ընդունեց վերոհիշյալ առաջարկությունների և հարցապնդումների, ինչպես նաև Եվրոպական խորհրդի մշակութային հարցերով նախարարների խորհրդակցության 1986 թ. նոյեմբերի 13-ին ընդունած որոշման առկայության պայմաններում: Այսպես, բանաձևում նշվում է, որ ողբերգական իրադարձությունները, որ տեղի ունեցան 1915-1917 թթ. Օսմանյան կայսրության տարածքում հայերի նկատմամբ, հանդիսանում են ցեղասպանություն՝ համաձայն ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1948 թ. դեկտեմբերի 9-ին ընդունած «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժելու մասին» կոնվենցիայի[14]: Միաժամանակ նշվում էր, որ ժամանակակից Թուրքիան պատասխանատու չի կարող համարվել Օսմանյան կայսրության հայ բնակչության ողբերգության համար, և «ամենայն հաստատակամությամբ» ընդգծվում էր, որ պատմական այդ իրադարձությունների ճանաչումը որպես ցեղասպանություն՝ առիթ չի կարող հանդիսանալ քաղաքական, իրավական կամ նյութական որևէ պահանջի այսօրվա Թուրքիայի նկատմամբ[15]:

---

[12] **Խուրշուդյան Լ.**, *Հայկական հարցը, Ե., 1995, էջ 64:*

[13] *Հայոց ցեղասպանության դատապարտումը միջազգային կազմակերպությունների կողմից (1984-1987 թթ.), կազմող և ներածականի հեղինակ* **Բարսեղյան Լ.**, *Ե., 1999, էջ 9:*

[14] **Բարսեղյան Լ.**, *Միջազգային հանրությունը դատապարտում է Հայոց ցեղասպանությունը…, էջ 9:*

[15] *Նույն տեղում:*

Բանաձևի երրորդ կետը պահանջում է Եվրախորհրդից ճնշում գործադրել ներկայիս թուրքական կառավարության վրա, որպեսզի վերջինս ճանաչի 1915-1917 թթ. հայերի հանդեպ կազմակերպված ցեղասպանությունը և այդպիսով նպաստի քաղաքական երկխոսության հաստատմանը Թուրքիայի և հայերի լիազոր պատվիրակների միջև: Չորրորդ կետում նշվում է, որ ցեղասպանության ճանաչումից Թուրքիայի հրաժարումը անհաղթահարելի արգելքներից մեկը կդառնա Եվրոպական տնտեսական համագործակցության մեջ Թուրքիայի հնարավոր ընդունման քննարկման համար:

Թուրքիան փաստորեն, ելնելով այն իրողությունից, որ ինչպես Եվրոպական խորհրդարանը, այնպես էլ Միավորված ազգերի կազմակերպությունն իրավաբանական տեսանկյունից պատժամիջոցների կիրառման իրավունքներով օժտված չեն, ընդհանրապես հրաժարվեց բանաձևի գոյության փաստն ընդունելուց:

1983թ. հուլիսի 24-ից օգոստոսի 10-ը Կանադայի Վանկուվեր քաղաքում Եկեղեցիների Համաշխարհային խորհուրդը քննարկեց «Հայոց ցեղասպանության մասին» զեկույցը և ընդունած որոշման մեջ արձանագրեց, որ «... մենք ևս մեկ անգամ պետք է հիշենք դարասկզբին Թուրքիայում մեկուկես միլիոն հայերի ողբերգական կոտորածները և մյուս կես միլիոնի բռնագաղթն իրենց պատմական հայրենիքից»[16]: Ապա 1989թ. մայիսին Եկեղեցիների համաշխարհային խորհրդի Սան-Անտոնիոյում կայացած համագումարը հատուկ որոշում ընդունեց հայերի ցեղասպանության մասին՝ կոչ անելով խորհրդի բոլոր անդամներին «դիմել իրենց երկրների կառավարություններին ճնշում գործադրելու Թուրքիայի վրա՝ հայերի ցեղասպանության փաստը ճանաչելու նպատակով»[17]:

Իհարկե, Հայաստանի առաջին Հանրապետության (անկախ պետականության) կորուստը մեծ վնաս էր ցեղասպանության ճանաչման գործընթացին: Միայն Արցախյան ազգային-ազատագրական պայքարի վերելքը ստիպեց Խորհրդային Հայաստանի Գերագույն խորհրդին 1988 թ. նոյեմբերի 22-ին ընդունել օրենք «Օսմանյան Թուրքիայում հայերի 1915 թ. ցեղասպանության դատապարտման մասին»: Դատապարտելով հայերի ցեղասպանությունը որպես մարդկության դեմ ուղղված ծանրագույն հանցագործություն՝ ընդունվեց օրենք, և Ապրիլի 24-ը հայտարարվեց հայերի ցեղասպանության զոհերի հիշատակի օր: Առաջարկություն ներկայացվեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահություն՝ 1915 թ. ցեղասպանությունը ճանաչելու և դատապարտելու մասին[18]:

---

[16] **Բարսեղյան Լ.**, *Տարեգրություն Հայոց ցեղասպանության պաշտոնական դատապարտման և ճանաչման (1915-2003 թթ.), էջ 44:*

[17] **Բարսեղյան Լ.**, *Միջազգային հանրությունը դատապարտում է Հայոց ցեղասպանությունը..., էջ 26:*

[18] **Բարսեղյան Լ.**, *Հայոց ցեղասպանության հրապարակայնորեն դատապարտման և ճանաչման ժամանակագրություն (1915-2004 թթ.), Ե., 2001, էջ 35:*

1990 թ. ապրիլի 19-ին Կիպրոսի խորհրդարանը հատուկ բանաձև ընդունեց Հայոց ցեղասպանությունը դատապարտելու մասին[19]:

1990 թ. Հայաստանի առաջին և երկրորդ հանրապետություն-ներին փոխարինելու եկավ երրորդ անկախ հանրապետությունը, որը ՀՀ Գերագույն խորհրդի նույն թվականի օգոստոսի 23-ի առաջին նստաշրջանում ընդունեց «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին» փաստաթուղթը. դրանով դրվեց անկախության գործընթացի սկիզբը: Հենց այս փաստաթղթում հատուկ կետ մտցվեց 1915 թ. Հայոց ցեղասպանության դատապարտման վերաբերյալ, որը վկայում էր, որ Հայաստանի երրորդ հանրապետությունը տեր կկանգնի Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացին: 1991թ. սեպտեմբերի 21-ին Հայաստանը հռչակվեց անկախ Հանրապետություն:

ԽՍՀՄ փլուզումից հետո Հարավային Կովկասում ստեղծվեց նոր քաղաքական իրավիճակ. տարածաշրջանի քաղաքական քարտեզի վերաձևումը իր ազդեցությունը թողեց նաև նոր ձևավորվող հայ-թուրքական հարաբերությունների վրա:

1991 թ. դեկտեմբերին Հայաստանի անկախությունը ճանաչող երկրների թվում էր նաև Թուրքիան, որը թվում էր, թե իր շահերից ելնելով, պետք է բարիդրացիական հարաբերություններ հաստատեր հարևաններից հատկապես Հայաստանի հետ, բայց նա ոչ միայն հրաժարվեց դիվանագիտական հարաբերություններ հաստատելուց, այլև երկկողմ հարաբերությունների կարգավորման նպատակով առաջ քաշեց մի շարք նախապայմաններ: Դրանցից էին՝ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումից ու պահանջատիրությունից, Արցախյան հիմնահարցի դրական լուծումից հրաժարում և սփյուռքահայության հակաթուրքական գործունեության վերացում, Կարսի պայմանագրի ճանաչում[20]:

Ի տարբերություն Թուրքիայի՝ ՀՀ-ն հանդես եկավ առանց նախապայմանների դիվանագիտական հարաբերություններ հաստատելու օգտին և ձգտեց ապահովել տարածաշրջանում Թուրքիայի ներգրավվածությունը: Սակայն նման քաղաքականությունը արդյունք չտվեց, և Թուրքիան մինչև այժմ էլ շարունակում է դիվանագիտական հարաբերություններ չունենալ Հայաստանի հետ ու պնդել իր առաջ քաշած նախապայմանները: Թուրքիայի նման դիրքորոշումը բացատրվում էր նրանով, որ դեռևս 1990թ. օգոստոսի 23-ին Հայաստանի Գերագույն խորհրդի ընդունած Անկախության մասին հռչակագրի 11-րդ կետում նշված էր, որ Հայաստանի Հանրապետությունը սատար է կանգնում 1915թ. Օսմանյան

---

[19] Հայոց ցեղասպանություն. Աշխարհի պետությունները, ազգային խորհրդարանները և միջազգային կազմակերպությունները դատապարտում են և ճանաչում (նյութերի ժողովածու), էջ 222:

[20] **Հովհաննիսյան Ն.,** Մերձավորարևելյան տարածաշրջանը և Հայաստանի ազգային անվտանգության խնդիրը (Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, թիվ 16, Ե, 1996, էջ 14):

Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործին[21]:

Ռուսաստանյան հեղինակներ Ա.Ա. Կուրտովի և Ա.Մ. Խալմուխամեդովի կարծիքով հռչակագիրը փաստորեն չեղյալ հայտարարեց Թուրքիայի հետ խորհրդային իշխանությունների հաստատած սահմանը, որը կարող էր դիտվել որպես տարածքային պահանջ Կարսի և Արդահանի շրջանների նկատմամբ[22]:

Հայ-թուրքական հարաբերությունները ներկա համաշխարհային քաղաքականության մեջ համարվում են երկկողմ ամենաբարդ հարաբերությունների օրինակ և իրենց քաղաքական նշանակությամբ ունեն ոչ միայն տարածաշրջանային նշանակություն, այլ նաև մաս են կազմում համաշխարհային խորքային քաղաքական գործընթացներին: Թուրքիան, ի դեմս հայկական գործոնի, ոչ միայն ստիպված է հաշվի առնել ՀՀ և տարածաշրջանային պետության գոյությունը, այլև ստիպված է դիմագրավել համահայկական գործոնին՝ ի դեմս սփյուռքահայության կազմակերպված պահանջատիրության: Այսօր ևս, ինչպես XIX դարում, հայկական հարցի շուրջ խաչաձևվում են ոչ միայն այս երկու ժողովուրդների շահերը, այլև համաշխարհային դերակատարություն ունեցող քաղաքական կենտրոնների շահագրգռությունները: Քաղաքական վտանգը մեծանում է նրանով, որ արտաքին շահերի ճնշման ներքո այս հարաբերություններում առկա կոնֆլիկտը երկկողմից կարող է դուրս գալ բազմակողմ կոնֆլիկտների դաշտ:

Միանգամայն այլ է ԱՄՆ կառավարության վերաբերմունքը: Հայտնի է, որ ԱՄՆ-ն, որպես գերհզոր տերություն և Թուրքիային հովանավորող երկիր, կարող է ոչ միայն լուծել ցեղասպանության ճանաչման հարցը, այլև պարտադրել Թուրքիային ընդունել անառարկելի փաստարկված իրողությունը: Երկարատև պայքարի ընթացքում, որը սկսվել է դեռևս 1975 թվականին և շարունակվում է մինչև այսօր, Միացյալ Նահանգների կոնգրեսի Ներկայացուցիչների պալատին չհաջողվեց հաղթանակի հասնել:

Այնուհանդերձ, ԱՄՆ-ի կոնգրեսականների և սենատորների զգալի մասի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը դիտարկվում է որպես խիստ հրատապ մի հարց, որից նրանք հրաժարվել չեն ցանկանում[23]: Դեռևս 1991 թ. ապրիլի 20-ին ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշը հայտարարեց ամերիկացիներին, որ ինքը միանում է բոլոր նրանց, ովքեր Ապրիլի 24-ն ընդունում են իբրև հայ ժողովրդի 1.5 միլիոնից ավելի զոհերի հիշատակի օր: 1997 թ. ապրիլի 22-ին նախագահ Բիլ Քլինթոնը հանդես է գալիս

---

[21] **Մինասյան Է.**, Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում (1990-2003 թթ.), Ե., 2003, էջ 246:

[22] Տե՛ս. **Куртов А. А.**, **Халмухамедов А. М.** *Армения -Турция: противостояние или сотрудничество? (Армения: проблемы независимого развития/под общ. ред. Е.М. Кожокина/, М., 1998, с.450).*

[23] **Բարսեղյան Լ.**, Ամերիկայի Միացյալ Նահանգները, Հայոց ցեղասպանության դատապարտումը և թուրքական հակազդեցությունը, Ե., 2001, էջ 7, 8:

հայտարարությամբ, որտեղ 1915-1923 թթ. Օսմանյան կայսրությունում 1.5 միլիոն հայերի սպանդը համարում էր XX դարի պատմության ամենասև էջը[24]:

Հարկ է ընդգծել, որ 1980-1990-ական թթ. տեղի ունեցան մի շարք միջազգային գիտաժողովներ, որոնց օրակարգերում դրված էր Հայոց ցեղասպանությունը ուղղակի, կամ էլ այդ հարցը գրավում էր դրանց աշխատանքների կարևոր բաժինը:

1982 թ. Թել-Ավիվում կայացավ «Բնաջնջման և ցեղասպանության միջազգային կոնֆերանս», 1987 թ. Աթենքում՝ «Հայկական հարցը և թուրքական ծավալապաշտությունը», 1988 թ. Օքսֆորդում՝ գիտնականների միջազգային կոնֆերանս՝ «Հիշել հանուն ապագայի» խորագրով, 1989 թ. Կալիֆոռնիայի համալսարանում միջազգային սիմպոզիում՝ «Հայերի ցեղասպանություն, պատմություն, քաղաքականություն, բարոյագիտություն» թեմաներով, 1990 թ. Երևանում՝ «Հայերի ցեղասպանություն, պատմություն, տեսություն, քաղաքական պատասխանատվություն» օրակարգով[25]:

Շեշտենք, որ բոլոր վերոհիշյալ պարագաներում պետությունների, հասարակական թե գիտական մակարդակներով քննարկումների նախապատրաստական աշխատանքներին առավելագույն մասնակցություն են բերել Սփյուռքի կազմակերպությունները՝ կուսակցություններն ու քաղաքական հոսանքները, միջմիութենական մարմինները, Հայ դատի հանձնախմբերը, հայագիտական հաստատությունները և անհատ գիտնականները, ՀԲԸՄ-ը, Ամերիկայի Հայկական Համաժողովը: Իսկ 1987թ. Աթենքում հրավիրված գիտաժողովի հիմնական նախաձեռնողը եղավ «ԱՍՍԼԱ-հեղափոխական շարժում» կազմակերպությունը, որի գործունեության առարկայական արդյունքն ունեցավ երկակի բնույթ: Մի կողմից՝ շարժեց համաշխարհային հասարակական կարծիքը, որ կարծես ամբողջովին մոռացել էր Հայ դատը 1923 թվականից ի վեր, Լոզանից հետո: Մյուս կողմից՝ հզոր ազդակ եղավ, որ սփյուռքահայությունը, մասնավորապես օտար ափերում ծնված նոր սերունդները, և թվում էր, թե գրեթե ուծացել էին, վառ պահեն իրենց պատմական հիշողությունը, վերընձյուղեն հայեցի կեցության ծառը Սփյուռքի պայմաններում: Եվ փաստորեն, ի տարբերություն հանրային թյուր կարծիքի, այս կազմակերպության ծրագրի հիմնական առանցքը ոչ թե վրեժխնդրությունն էր, այլ «Արևմտյան Հայաստանի և բռնագրավյալ մյուս տարածքների ազատագրումը՝ զինյալ պայքարի ուղով»[26]:

Այսպիսով, Հայոց ցեղասպանությունը, լինելով XX դարի առաջին ցեղասպանությունը, վերջին տասնամյակի ընթացքում սփյուռքահայ երիտասարդության անձնազոհ ահաբեկչական պայքարի շնորհիվ դառնալով

---

[24] **Կարապետյան Մ.**, **Գևորգյան Է.**, **Մելքոնյան Է.**, **Արզարյան Ա.**, *Հայոց Մեծ Եղեռնի պատմության հիմնահարցերը հայ պատմագրության մեջ, Ե., 2010, էջ 436:*

[25] **Դալլաքյան Կ.**, *Հայ սփյուռքի պատմություն, Ե., 1992, էջ 172:*

[26] *Նույն տեղում, էջ 173-174:*

զանազան երկրների խորհրդարանների, կառավարությունների, զանգվածային լրատվության միջոցների բուռն քննարկումների առարկա, դուրս եկավ մոռացության վիճակից, և կրկին վերածվեց միջազգային դիվանագիտության հարցի, որի միջազգային ճանաչմանն ու դատապարտմանը հասնելը դարձավ բովանդակ հայության գերագույն խնդիրներից մեկը: Ճիշտ է, Հայաստանի երրորդ Հանրապետության ղեկավարությունը սկզբում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման խնդիրը պետության արտաքին քաղաքականության գլխավոր առանցքը չդարձրեց, այնուամենայնիվ, Անկախ Հանրապետության առկայությունը և սփյուռքահայության ակտիվությունը այս հարցում ունեցան դրական արդյունքներ:

ИЗ ИСТОРИИ ПРОЦЕССА ПРИЗНАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН (1965-1991гг.)

НАДЖАРЯН М. Т.

Резюме

Геноцид армян, являясь первым геноцидом XXв., стал предметом горячих дискуссий в парламентах, правительствах и средствах массовых информаций различных стран благодаря самоотверженной террористической борьбе молодежи армянской диаспоры, а начиная с 1965 года - вопросом международной дипломатии.

Признав независимость РА, Турция не захотела установить дипломатических отношений с Арменией, продолжая всячески отрицать факт геноцида армян и проводя как внутреннюю, так и внешнюю политику отрицания данного неоспоримого исторического факта.

FROM THE HISTORY OF THE RECOGNITION OF THE ARMENIAN GENOCIDE (1965-1991)

M. NAJARYAN

Abstract

Armenian Genocide was the first genocide of the 20th century. Destined to oblivion, it became the subject of heated debates in parliaments, governments, and mass media due to the efforts of the Armenian youth in Diaspora. It has always been the supreme task of the entire Armenian nation to help the issue gain worldwide recognition and criticism. Turkey, which recognized the independence of RA, has not yet formalized diplomatic relations with the Republic of Armenia, and still denies the historical fact of the Armenian Genocide, running the policy of denial both on its borders and outside. However, faced with the Armenian factor Turkey not only has to take into account the existence of RA and the regional state, but also has to cope with pan Armenian factor on behalf of claims presented by Diaspora.